

Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
հուլիսի 20-ի N 1233 - Ա որոշման

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.	Հայտատուի (կազմակերպության) անվանումը և կազմակերպչի անվանումը, հիմնադրման տարեթիվը	«Յու Էմ Ագրո» ՍՊԸ, գրանցված՝ 25.07.2018 թ.
	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	00185576
	Կազմակերպության բաժնետերերը	Արմեն Ռուբենի Սաքապետոյան
	Կոնտակտային տվյալներ՝ անուն, հայրանուն, ազգանուն	Արեգ Ռուբենի Սաքապետոյան
	Իրավաբանական հասցեն	1005, ՀՀ, Արմավիրի մարզ, Երվանդաշատ հողամաս
	Տնտեսական գործունեության դասակարգիչը	N 82.99.0
	Հեռախոսահամարը	+374 93 41 11 27
	Էլ. փոստը	umagroa@gmail.com
2.	Ներդրումային ծրագրի իրականացման վայրը/հասցե (ներառյալ կադաստրային գոտին)	ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Բագարան և Երվանդաշատ գյուղեր
3.	Ներդրումային ծրագրի համառոտ նկարագրությունը (ծրագրի նպատակը, իրականացվելիք աշխատանքները, մրցակցային առավելությունները, արտահանման ուղղությունները և քաղաքականությունը, ծրագրով	1. Ընկերությունը նախատեսում է Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Բագարան և Երվանդաշատ գյուղերում սեփականության իրավունքով իրեն պատկանող 2088 հա

<p>նախատեսված գործունեության տեսակի հստակ նկարագրությունը՝ նշելով տնտեսական գործունեության դասակարգիչը, ստեղծվելիք աշխատատեղերը, միջին աշխատավարձը և այլն)</p>	<p>գյուղատնտեսական նշանակության հողամասերում հիմնել նուշի ինտենսիվ այգիներ և խոշոր ֆերմերային տնտեսություն:</p> <p>2. ՏԳՏԴ՝ Ա՝ գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն:</p> <p>3. Նուշի այգիների հիմնման նշված ծրագրի իրականացման արդյունքում 01.11.2022-01.11.2023 թվականների ընթացքում համայնքում ներդրվելու է շուրջ 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ, հաջորդող ևս 2 (երկու) տարիներին՝ տարեկան շուրջ 300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ, իսկ հաջորդող ևս 2 (երկու) տարիներին նախատեսվում են տարեկան շուրջ 300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամի հեռանկարային ներդրումներ ևս:</p> <p>4. Ծրագրի իրականացման առաջին տարում ստեղծվելու են 15 (տասնհինգ) հիմնական աշխատատեղ և 20 (քսան) սեզոնային աշխատատեղ, իսկ ծրագրի իրականացման հաջորդող 5 (հինգ) տարվա ընթացքում՝ յուրաքանչյուր տարի և՛ հիմնական, և՛ սեզոնային աշխատատեղերը ավելանալու են յուրաքանչյուրը 5 (հինգ) աշխատատեղերով, արդյունքում ծրագրի իրականացման հինգերորդ տարում առկա կլինի 35 (երեսուներես) հիմնական և 40 (քառասուն)</p>
--	---

	<p>սեզոնային աշխատատեղ՝ նպաստելով համայնքի զարգացմանը և զբաղվածության ապահովմանը: Աշխատողների միջին աշխատավարձը նախատեսվում է սահմանել 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերի, տուրքերի և վճարների:</p> <p>5. Ծրագրի մրցակցային առավելությունն այն է, որ նուշի լայնածավալ այգիներ Հայաստանի Հանրապետությունում գրեթե առկա չեն, իսկ եթե որոշ տնտեսություններ նույնիսկ առկա են, ապա դրանց բերքատվությունը բավականին քիչ է տեղական շուկայի համար, ուստի լայնածավալ այգիների առկայությունը մեծապես կնպաստի ՀՀ տնտեսության զարգացմանը և նման արտադրատեսակի արտահանմանը:</p> <p>Ստացված արտադրանքը սկզբնական շրջանում ապահովելու է ներքին շուկայի պահանջարկը, այնուհետև հիմնականում արտահանվելու է եվրոպական երկրներ:</p> <p>6. Ծրագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության՝ գերակա ոլորտում հանրային ներդրումային ծրագրերի որդեգրած ռազմավարությանը: Այն նաև համապատասխանում է ՀՀ կառավարության արտահանման խթանմանը միտված քաղաքականությանը:</p>
--	--

		<p>7. Ծրագրի բարեհաջող իրականացման ընթացքում, գյուղատնտեսական փուլից բացի, նախատեսվում է հետագայում նաև ստեղծել տուրիստական, մշակութային, ակտիվ ժամանցի կենտրոն, որը կնպաստի ՀՀ-ի զբոսաշրջության զարգացմանը, հատկապես էկոզբոսաշրջության ոլորտում:</p>
4.	<p>Ներդրումային ծրագրի իրականացման, մասնավորապես՝ անշարժ գույքի կառուցման և հիմնական միջոցների ձեռքբերման (այդ թվում՝ տեղափոխման և տեղադրման) ժամանակացույցը (ժամանակացույցը կազմվում է մեկնարկի պահից սկսված) և նկարագրությունը</p>	<p>Ներդրումային ծրագրի իրականացման առաջին փուլում կառուցվելու են ջրամբար, պոմպակայան և անհրաժեշտ այլ ենթակառուցվածքներ, այնուհետև փուլերով յուրաքանչյուր տարի տնկվելու է մինչև 300 հա մակերեսով այգի:</p> <p>Ներդրումային ծրագրի մեկնարկը և ընթացքը նախատեսվում է՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Ծրագրի մեկնարկը տրվել է 2022 թվականի նոյեմբերի 1-ից: 2. Ծրագրի մեկնարկով սկսվել են հողի գեոդեզիական, մելիորացման, համապատասխան փոստրակների փորման և անհրաժեշտ այլ աշխատանքների իրականացումը, Իսպանիայից տնկիների ձեռքբերման, տեղափոխման, ձևավորման և տնկման աշխատանքները: Ծրագրի պատշաճ իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական արդեն իսկ ձեռք է բերվել ընկերության կողմից:

		<p>3. Սույն հայտի 3-րդ մասում նշված՝ շուրջ 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամը ներդրվելու է ծրագրի մեկնարկից սկսած մեկ տարվա ընթացքում:</p>
5.	<p>Նախատեսվող ներդրումների չափի և ուղղությունների նկարագրությունը (անշարժ գույքի կառուցում, հիմնական միջոցներ)</p>	<p>1. Ծառերի ձեռքբերում՝ 1 հա-ի համար 300 հատ ծառ: Այգետնկման աշխատանքներն իրականացվելու են փուլերով՝ 5 (հինգ) տարվա ընթացքում, յուրաքանչյուր տարի մինչև 300 հա մակերեսի վրա կատարվելու են հողի մելիորացման աշխատանքներ՝ ծառերի տնկման նախապատրաստական աշխատանքներ, որի համար ընկերությունն արդեն ձեռք է բերել համապատասխան տեխնիկա՝ 1 (մեկ) էքսկավատոր և 2 (երկու) ինքնաթափ: Մելիորացման համար անհրաժեշտ այլ տեխնիկական միջոցները (քարահավաք մեքենա, խոր վար, շիգել և այլ աշխատանքներ կատարող) ներգրավվելու են վարձակալությամբ կամ այդ աշխատանքների կատարումը պատվիրակվելու է մասնագիտացված կազմակերպությունների:</p> <p>2. Երվանդաշատ գյուղում գտնվող բնական աղբյուրից շուրջ 3 կմ երկարությամբ ջրագծի նախագծում և կառուցում (նախագիծը կցվում է):</p> <p>3. Մինչև 100.000 խոր. մ մակերեսով ջրահավաք ավազանի նախագծում և կառուցում:</p>

		<p>4. Ներտնտեսային ճանապարհների նախագծում և կառուցում:</p> <p>5. Ենթակայանների նախագծում և կառուցում:</p> <p>6. Կաթիլային համակարգի նախագծում և կառուցում:</p>
6.	<p>Անհրաժեշտ ենթակառուցվածքի նկարագրությունը և դրա անհրաժեշտության հիմնավորումը</p>	<p>1. Նշված տարածքը, որը գտնվում է Ախուրյան և Արաքս գետերի ավազանում՝ գետերից շուրջ 250 մետր բարձրության վրա, երբեք ջուր չի ունեցել և չի մշակվել, տարածքում առկա են մշակվող փոքր հողամասեր, որոնք սնվում են գոյություն ունեցող ջրանցքից, սակայն նույնիսկ այս փոքր հողամասերին ջուրը չի բավականացնում՝ ըստ անհրաժեշտության ջուր օգտագործելու համար:</p> <p>Ընկերության կողմից նախատեսվող ներդրումային ծրագրի իրականացման առաջին փուլում խիստ անհրաժեշտ է լուծել ջրամատակարարման հարցը:</p> <p>2. Նախատեսվում է կառուցել Երվանդաշատ գյուղում գտնվող բնական աղբյուրից շուրջ 3 կմ երկարությամբ ջրագիծ, 2 աստիճանի պոմպակայան, յուրաքանչյուրը 145 մ ստատիկ բարձրությամբ: Ջրառը կատարվելու է Երվանդաշատի տարածքում գտնվող ջրաղբյուրից, որտեղ կառուցվելու է խորքային տիպի պոմպային ագրեգատի</p>

	<p>համար ջրընդունիչ հանգույց: Յուրաքանչյուր աստիճանում տեղադրվելու է ՅԱԵ 12-250-140mm, N=130 կՎտ ագրեգատ, որի թողունակությունը հասնում է մինչ 200 մ³/ժ: Կաթիլային համակարգի ներդրման պայմաններում ջրառը թույլ է տալու ռոռզման ջրով ապահովել շուրջ 300 հա հողատարածք: Ռոռզման նորման կլիսի 3500մ³/տարի: 300 հա նուշի այգու համար տարեկան ջրասպառումը նախատեսվում է՝ $250 \times 3500 = 875,000 \text{մ}^3$:</p> <p>Երկրորդ աստիճանի պոմպը ջուրը մատակարարելու է 100,000 մ³ տարողությամբ ջրամբար: Ջրամբարի մոտ տեղադրվելու է պոմպակայան, որտեղից ջուրը մատակարարվելու է դեպի ռոռզման կաթիլային համակարգ: Նշված ջրագիծը հանդիսանում է ամենակարևոր ենթակառուցվածքը, որի կառուցման ընդհանուր նախնական արժեքը նախնական արված հաշվարկների հիման վրա կազմում է շուրջ 257,400,000 (երկու հարյուր հիսունյոթ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, որի կառուցման համար անհրաժեշտ ծախսերի մասով ակնկալվում է պետության օժանդակությունը, ինչն ավելի մանրամասն ներկայացված է ծրագրին կից հավելվածում: Հարկ է նշել, որ ջրագիծը թե՛ ընկերության</p>
--	--

	<p>կամ թե՛ պետական աջակցությամբ կառուցելու դեպքում սահմանված կարգով պետք է հանձնվի ջրօգտագործող ընկերության (ՋՕԻ) կառավարմանը, որն իր գործառույթների շրջանակներում պետք է իրականացնի դրա շահագործումը:</p> <p>3. Մյուս կարևոր ենթակառուցվածքը ջրամբարն է, որի կառուցման ծախսերը կատարվելու են չնկերության միջոցներով և ստացված ներդրումներով, որոնց վերաբերյալ նախահաշիվները և ժամանակացույցը կցվում են:</p> <p>Նշված տարածքում ջրամբարի կառուցումը շատ կարևոր նշանակություն ունի տարածքի բոլոր հիմնադրվելիք այգիների ջրապահովման համար: Ջրամբարի կառուցումը ոչ մի կերպ չի խոչընդոտելու տարածքում գտնվող այլ հողամասերի ջրամատակարարմանը, ոռոգման համակարգերին, փոխարենը կարող է նույնիսկ նպաստել դրանց:</p> <p>Տարածքին մոտ գտնվող Ախուրյանի ջրամբարի ջուրը չի հասնում ընկերության գործունեության համար նախատեսված տարածքներ, իսկ տվյալ տարածքում, որտեղ նախատեսվում է իրականացնել ներդրումային ծրագիրը, խիստ անհրաժեշտ է պատշաճ կաթիլային ոռոգման համակարգ</p>
--	--

		ունենալը, որը կբավականացնի նուշի այգիների պատշաճ մշակման համար:
7.	Ծրագրին վերաբերող այլ տեղեկություններ (հայտատուի հայեցողությամբ)	Ընկերությունն ակնկալում է հնարավոր պետական աջակցության տրամադրման մասին որոշման կայացում հնարավորինս սեղմ ժամկետում, քանի որ նախատեսվում է ծառատնկման աշխատանքներն իրականացնել 2023 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, իսկ նախատեսված ջրագիծը պետք է մինչ այդ արդեն կառուցված լինի:

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄԻՆՉԵՎ 300 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՋՐԱՐԲԻԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ*

NN ը/կ	Անվանումը		Քանակը	Միավորի արժեքը (ՀՀ դրամ)	Ընդհանուր արժեքը (ՀՀ դրամ)
1.	Պոմպականի հիդրոտեխնիկական մաս I աստիճան ՅՈՒՅ 12-250-140 րո, N=130 կՎտ	հատ	1	14,000,000	14,000,000
2.	Էլ. սնուցում, ՅՈՒՅ 12-250-140րո, N=130 կՎտ	հատ	2	8,700,000	17,400,000
3.	Մղման խողովակաշար L=3000 մ, D=250 մմ, 20 մթն.	մ	3150	60,000	189,000,000
4.	Մղման խողովակաշարի պաշտպանություն	կոմպլ.	1	17,000,000	17,000,000
5.	Նախագծանախահաշվային աշխատանքներ	հատ	1	20,000,000	20,000,000

Ընդամենը՝				257,400,000
-----------	--	--	--	-------------

*Նախատեսվում է կառուցել Երվանդաշատ գյուղում գտնվող բնական աղբյուրից շուրջ 3 կմ երկարությամբ ջրագիծ, 2 աստիճանի պոմպակայան՝ յուրաքանչյուրը 145 մ ստատիկ բարձրությամբ: Ջրառը կատարվելու է Երվանդաշատի տարածքում գտնվող ջրաղբյուրից, որտեղ կառուցվելու է խորքային տիպի պոմպային ագրեգատի համար ջրընդունիչ հանգույց: Յուրաքանչյուր աստիճանում տեղադրվելու է ԷՑՎ 12-250-140ՆՌՕ, N=130 կՎտ ագրեգատ, որի թողունակությունը հասնում է մինչև 200 մ³/ժ: Կաթիլային համակարգի ներդրման պայմաններում ջրառը թույլ է տալու ոռոգման ջրով ապահովել շուրջ 300 հա հողատարածք: Ոռոգման նորման կլինի 3500 մ³/տարի: 300 հա նուշի այգու համար տարեկան ջրասպառումը նախատեսվում է, որ կլինի՝ 250x3500=875.000 մ³: Երկրորդ աստիճանի պոմպը ջուրը մատակարարելու է 100,000 մ³ տարողությամբ ջրամբար: Ջրամբարի մոտ տեղադրվելու է պոմպակայան, որտեղից ջուրը մատակարարվելու է դեպի ոռոգման կաթիլային համակարգ: Նշված ջրագիծը ամենակարևոր ենթակառուցվածքն է, որի կառուցման ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 257,400,000 ՀՀ դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ